Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ

Թեմա՝ «Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ուսուցման գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցիչի օգնական՝ Էլիզա Կիրակոսյան

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն ----------3

2. Գլուխ 1. Ինչ է ուսումնառության համընդհանուր ձևավորումը----------4

3. 1.1 Համընդհանուր ձևավորումը և կրթությունը----------5

4. 1.2 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը----------8

5. 1.3. ԱՈՒՊ-ները և համընդհանուր ձևավորումը----------9

6. Գլուխ 2. Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները և ուղենիշները----------12

7. 2.1 Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն----------13

8. 2.2 Ուսումնական գործունեության և գիտելիքն արտահայտելու ձևերի բազմազանություն----------14

9. 2.3 Ներգրավման ձևերի բազմազանություն----------16

10. Գլուխ 3. Փորձարարական դաս՝ պլանավորված Ուհձ սկզբունքներով-----18

11. Եզրակացություն----------25

12. Գրականության ցանկ----------26

Ներածություն

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ներկայացնում է գիտականորեն արժանահավատ սկզբունքների համակարգ, որոնց կիրառումը ուսուցչին օգնում է ճանաչել և վերացնել ուսումնառության խոչընդոտները սովորողների մոտ սկսած պլանավորման փուլից: Ուսումնառության համընդհանուր ձևավորումը կրթական մոտեցում է, որը թույլ է տալիս ուսումնառության բոլոր փուլերում կրթական միջավայրը, ուսումնական ծրագրերը, դասավանդման մոտեցումը և ուսումնառության գնահատումը հարմարեցնել սովորողների բազմազան կարիքներին և առանձնահատկություններին պահպանելով բարձր ակնկալիքներ և մատչելիություն բոլոր սովորողների համար:

Թեմայի արդիականությունը:

Թեման անչափ կարևոր է ինչպես համընդհանուր ներառականության, այնպես էլ լիարժեք և ամբողջական դասեր պլանավորելու, հետաքրքրություն և բազմազանություն ապահովելու առումներով:

Հետազոտական աշխատանքի նպատակը.

Դիտարկել և ուսումնասիրել ուսումառության համընդհանուր ձևավորման սկզբունքների կիրառումը ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում և դասեր պլանավորելիս:

Հետազոտական աշխատանքի խնդիրները.

● Որքանո՞վ են կիրառվում ՈՒՀՁ սկզբունքները և ուղենիշները:

●Որքանո՞վ են ստեղծվում բոլոր սովորողների համար հասանելի ուսումնական առաջադրանքներ՝ կիրառելով ՈՒՀՁ սկզբունքներ:

● ՈՒՀՁ, ո՞ր սկզբունքներն են առավել շատ կիրառվում ուսուցիչների կողմից՝ ուսուցման արդյունավերությունը մեծացնելու նպատակով:

Մ.Խաչատրյանը և Մ.Դավթյանը նշում են, որ ՈՒՀՁ-ն սովորողների բազմազանությունը ճանաչելու, հարգելու և արժևորելու միջոց է: Այն թույլ է տալիս զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժն ու բարձր ակնկալիքներ սահմանել ակադեմիական առաջընթացի, որպես անհատ զարգանալու համար՝ անկախ սոցիալական կարգավիճակից,անհատական տարբերություններից, հաշմանդամությունից, սեռից կրոնից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից և այլ հանգամանքներից: ՈՒՀՁ-ն հնարավորություն է տալիս պլանավորել դասը՝ հաշվի առնելով կոնկրետ աշակերտների տարբերությունները և առանձնահատկությունները: Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական:

Գլուխ 1. Ի՞նչ է ուսումնառության համընդհանուր ձևավորումը.

Համընդհանուր ձևավորում հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը: Հայտնի են նրա հետևյալ խոսքերը՝ համընդհանուր ձևավորումը արտադրանքի և միջավայրերի նախագծում է բոլոր մարդկանց օգտագործման համար, հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների անհրաժեշտությունը: Մեյսը անվասայլակով էր տեղաշարժվում և անվերջ խնդրում էր, որ շենքերում ապահովվի ֆիզիկական մատչելիությունը: Ի վերջո, նա առաջարկեց շենքերը նախագծելիս հաշվի առնել մատչելիության հանգամանքը՝ խնայելով ժամանակ, գումար և բարելավելով բոլորի կյանքը: Լայն իմաստով, ճարտարապետական համընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել անխտիր բոլոր շինությունների մատչելիությունը անխտիր բոլորի համար: Սակայն համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել ճարտարապետությունից զատ այլ բնագավառներում: Օրինակ՝ համընդհանուր ձևավորման մոտեցումներից է յութուբի օգտատերերին հայտնի փակ ենթագրերի օգտագործումը: Այս տողերն ի սկզբանե նախագծվել են լսողության խանգարումներ ունեցող մարդկանց՝ տեղեկատվությանը ծանոթանալու հնարավորություն ընձեռելու համար, սակայն այժմ լայնորեն օգտագործվում են հեռուստացույցների էկրաններին: Այս ձևավորումը համընդհանուր է, քանի որ օժանդակում է լսողության խանգարումներ ունեցող մարդկանց, միաժամանակ դրանից օգտվում են բազմաթիվ այլ մարդիկ: Օրինակ՝ նրանք, ովքեր լիարժեք չեն տիրապետում տեղեկատվության լեզվին և միաժամանակ կարդում են տողատակերը, կամ անձինք, ովքեր ցանկանում են հեռուստացույց դիտել, երբ զուգընկերը քնած է, նաև նրանք, ովքեր աղմկոտ տեղում տեսանյութ են դիտում և ի զորու չեն լիարժեք լսելու տեղեկատվությունը:

Ուսումառության համընդհանուր ձևավորումը տրամադրում է անհրաժեշտ հարմարություններ, հարմարեցնում է կրթության էությունն ու բովանդակությունը սովորողների բազմազան կարիքներին ՝ պահպանելով բարձր ակնկալիքներ բոլոր սովորողների համար, ներառյալ հաշմանդամություն կամ հատուկ կարիքներ ունեցողներին, խոցելի խմբերի ներկայացուցիչներին: Կան համընդհանուր ձևավորման բազմաթիվ այլ օրինակներ.

● Ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողներին, հեծանվորդներին և այլոց:

● Աուդիոգրքերը, որոնք ստեղծվել են տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար, բայց լայնորեն կիրառվում են նաև տեղեկությունը լսողությամբ ընկալել նախընտրող, կարդալու ժամանակ չունեցող անձանց կողմից:

● Ձայնային ազդանշանով վերելակները, որոնք տեսողության խանգարում ունեցող անձանց նախազգուշացնում են վերելակի ժամանելու մասին, բայց օգտակար են նաև հեռախոսի մեջ խորասուզվածների համար:

Ի՞նչ է նշանակում ուսումնառության համընդհանուր ձեւավորումը

Սահմանել հստակ նպատակներ	Ճանաչել և կանխատեսել հնարավոր խոչընդոտները	ձևավորել այլընտրանքներ խոչընդոտները վերացնելու նպատակով
		

1.1 Համընդհանուր ձևավորումը և կրթությունը

2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ): Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին: Դեյվիդ Ռոզը և Անն Մեյերը ՈՒՀՁ-ն նկարագրել են որպես տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների ամբողջություն: ՈՒՀՁ-ի հիմքում այն սկզբունքն է, որ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է, սակայն ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար

բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն պետք է ցուցաբերեն։ Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա։ Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը։ Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողներին՝ որպես սովորական ու առանձնահատուկ երեխաների տարբերակումը վերացնելուն, ելնելով նրանից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և որ բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին։ Միաժամանակ, համընդհանուր ձևավորումը ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես լավ դասավանդումը։ Ըստ Էդիբերնի, համընդհանուր ձևավորումը ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և, միաժամանակ, անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է։ Հեշտ չէ ունենալ համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխանող դասարան։ Սակայն, երբ ուսուցիչները հիմնավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին։ Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար։ Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև։ Ուսումնական տարվա ընթացքում, իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից, ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին։ Միևնույն ժամանակ համընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի առավել լայն փիլիսոփայությանը։ Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն մոտեցում ներառական կրթության միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովելու մատչելիություն բոլորի համար։ Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար, մյուսների հետ հավասար հիմունքներով, ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության

և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են և տրամադրվում են հանրությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում, բազմազան միջոցների կիրառմամբ նյութը ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը, և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող է տարբեր դասարաններում տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին՝ սովորածը վերարտադրելիս և դասապրոցեսում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել պայմանների բարելավում լսողության խանգարում ունեցող սովորողի համար, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով՝ ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար: Ստորև ներկայացված են ուսուցիչների կողմից դասարաններում ճկունություն հանդես բերելու լրացուցիչ օրինակներ:

Ներառման գործում ՈՒՀՁ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմազանության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Մանկական գրականության միջոցով մարդկանց տարբերությունների ներկայացման (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016) և ուսուցիչների վերապատրաստումների նկատամբ նոր մոտեցումների մշակման արդյունքում խորանում են մարդկային բազմազանության մասին պատկերացումներն ու տարբերությունների ընդունումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու երևան են բերվում նրա ռեսուրսները և ներուժը: Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ իրար նման են, կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ գիշերօթիկ հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված: Այսօր Հայաստանում գնալով ավելի է տարածվում

բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը, և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները, նրանց մոտ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է դասավանդման որոշակի մոտեցման կիրառման դեպքում: ՈՒՀՁ-ը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող բազմազան աշակերտներ: ՈՒՀՁ-ը հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են նորմալ և ոչ նորմալ, կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

1.2 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը

Թե՛ հատուկ և թե՛ հանրակրթական դպրոցի մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի նախքան նոր դաս անցնելը: Տարբերակված ուսուցումը կիրառվել է աշխարհի տարբեր դպրոցների ներառական դասարաններում և հիմնված է Վիգոտսկու <<Զարգացման մոտակա գոտու>> տեսության վրա, ըստ որի սովորողները լավ են սովորում, երբ տրված հանձնարարությունները մատչելի են, ոչ թե շատ դժվար կամ պարզունակ: Քոֆմանը և Հալահանը այս մոտեցումը որակում են որպես տեղեկատվությանը դժվարությամբ տիրապետելու մոտեցում, համաձայն որի, հանձնարարությունները պետք է լինեն դժվար, բայց ոչ խրթին: Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒՀՁ գործընթացի մի մասը: ՈՒՀՁ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ որոշ սովորողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր: Այսպես, Էդիբըրնը ներկայացրել է ուսուցման դժվարություններ ունեցող սովորողներին վերաբերող դեպքեր, ում ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են դասախոսելու և միայն տպագիր նյութերով դասավանդելու ավանդական ձևից: Նման սովորողների հետ աշխատելիս հատուկ պայմանների և փոփոխություններ մտցնելու կարիքը կարող է նվազել, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս ցուցաբերի ճկունություն: Այն դեպքում, երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները

վաղօրոք նկատի են առնվում և մատչելի դասավանդումը դրվում է դասի պլանավորման հիմքում՝ բոլորը կարողանում են ավելի լավ սովորել։

1.3. ԱՈՒՊ-ները և համընդհանուր ձևավորումը

Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները ունեն անհատական ուսումնական պլաններ։ Անհատական ուսումնական պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց։

Հասանելիություն

Պատմականորեն, հաշմանդամություն ունեցող սովորողները հաճախել են հատուկ դպրոցներ, որպեսզի ստանան նաև թերապևտիկ ծառայություններ։ Հաշմանդամություն ունեցող սովորողները կրթություն են ստացել առանձնացված հաստատություններում՝ հանրակրթական դպրոցներից ու հասարակությունից անջատ։ Պարտավորվելով իրականացնել ներառական կրթություն, Հայաստանը փոխեց մոտեցումը և ծառայությունների վրա հիմնված մոդելից անցում կատարեց իրավունքահենք մոդելի։ Սա նշանակում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին շարունակվում են մատուցվել ծառայություններ, բայց ավելի մեծ դեր է հատկացվում երեխաների՝ իրենց համայնքում տեղակայված դպրոցներում հավասար հիմունքներով կրթություն ստանալու իրավունքին։ Այս իրավունքն ամրագրված է ԱՈՒՊ-ի առաջին հիմնական նպատակի՝ հասանելիության մեջ։ Երբ հաշմանդամություն ունեցող սովորողները հատուկ դպրոցներից տեղափոխվում են հանրակրթական դպրոցներ, ուսուցիչները պատասխանատվություն են ստանձնում դասավանդվող նյութի հասանելիությունն ապահովելու համար։ Աշակերտի համար հասանելիությունն ապահովելիս կարևոր է տարբերակել մատուցման մատչելիությունը նպատակային հմտությունների հասանելի լինելուց։ Օրինակ՝ ուսուցիչը ներկայացնում է նյութ պատմությունից կամ մաթեմատիկայից։ Պատմության դեպքում նպատակային հմտությունն այն է, որ աշակերտը կարողանա յուրացնել պատմության կարևոր տարեթվերը։ Մաթեմատիկայի դեպքում նպատակային հմտությունը կարող է լինել երկնիշ թվերի բազմապատկումը։ Սակայն, նշված նպատակային հմտությունները կարող են հասանելի չլինել աշակերտի համար։ Կարող է թվալ, որ եթե աշակերտը զարգացման առանձնահատկության պատճառով դժվարանում է հասկանալ պատմության դասանյութի բովանդակությունը կամ թվեր գրել, նա երբեք չի հասնի դասի բուն նպատակին։ Սակայն, համընդհանուր ձևավորման մոտեցումներ կիրառող ուսուցիչը նպատակային հմտությունը կձևավորի

բազմազան ձևերի կիրառման միջոցով։ Օրինակ՝ պատմության դասաժամին տեղեկատվությունը կարող է ներկայացվել բանավոր՝ տեսահոլովակի կամ քննարկման միջոցով։ Մաթեմատիկայի դասին խնդիր լուծելու համար ուսուցիչը կարող է թույլատրել աշակերտին օգտվել տեխնոլոգիական միջոցից կամ եռաչափ առարկաներից (օրինակ՝ խորանարդիկներից)։ Երկու դեպքում էլ ուսուցիչը կարող է օգտվել համընդհանուր ձևավորման գաղափարներից, որպեսզի աշակերտներին օգնի տիրապետելու նպատակային հմտություններին։

Մասնակցություն

Հասանելիության հետ մեկտեղ բոլոր սովորողները իրավունք ունեն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու դասերին։ Այդպիսի ակտիվ մասնակցության համար ուսուցիչները դասը պետք է պլանավորեն հատուկ ձևով՝ օգտվելով համընդհանուր ձևավորման սկզբունքներից։ Օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտը կարող է ունենալ խոսքի խանգարում, հետևաբար համադասարանցու հետ երկխոսություն պահանջող աշխատանքի տարբերակը կարող է դժվար լինել։ Համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան կազմակերպված դասապրոցեսում համադասարանցու հետ հանձնարարության կատարումը կարող է լինել մասնակցություն ապահովելու ձևերից, բայց ուսուցիչը կարող է նաև կիրառել այլ ռազմավարություններ։

Առաջընթաց

Ներառումն ավելի խորը իմաստ ունի, քան հանրակրթական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ներկայության խրախուսումը։ Մանկավարժները պետք է լինեն գորովալից և մեծ ակնկալիքներ ունենան բոլոր սովորողներից։ Դպրոցները պետք է ակնկալեն առաջընթաց բոլոր սովորողներից։ Ներառական և հատուկ կրթության մոդելները տարբերվում են սովորողի գնահատման ձևով։ Եթե հատուկ կրթության մոդելի դեպքում սովորողն առաջընթաց չի ցուցաբերում, ենթադրվում է, որ դա նրա ունեցած առանձնահատկության հետևանք է։ Ներառական միջավայրում նման դեպքում ուսուցիչները և վարչական աշխատողները վերանայում են համակարգը, դպրոցի և դասարանի պայմանները՝ սովորողների ուսումնառության խոչընդոտները վեր հանելու համար։ Վերանայումից հետո կազմվում է սովորողի առաջընթացին օժանդակելու գործողությունների պլան։ Այդ պլանը կարող է ներառել հավելյալ աջակցություն։ Ուսուցիչները նախ և առաջ մտածում են, թե արդյո՞ք ուսուցման խոչընդոտը դասարանի միջավայրն է, իրենք իրենց հարցնելով.

1. Առկա՞ է նպատակային հմտություններ սովորեցնելու համար անհրաժեշտ հասանելիություն և հնարավո՞ր է արդյոք դա փոխել։

2. Արդյո՞ք փորձ կատարվել է նյութը մատուցելու բազմազան ձևերով՝ դրանք լավագույնս համապատասխանեցնելով աշակերտների ուսումնառության ոճին։

3. Կա՞ն ավելի լավ ձևեր, որոնցով կարելի է օգնել սովորողին՝ դրսևորելու իր սովորածը։

4. Արդյո՞ք դասարանում կան սովորողի ուսմանը խոչընդոտող գործոններ (օրինակ՝ ձանձրալի մթնոլորտ, աղոտ լուսավորություն, ճնշումներ դասընկերների կողմից, անհարմար դիրք)։

Համընդհանուր ձևավորումը, ինչպես անունը հուշում է, ուսուցման նպաստավոր միջավայր ստեղծելն է բոլոր սովորողների համար։ Այն կոչված է բարելավելու ներառականությունը՝ ուսուցչի վրա դնելով դասավանդման և ուսումնական գործընթացի կազմակերպման պարտականությունները։ Այս մոտեցումն արմատապես տարբերվում է այլ մոտեցումներից, որոնք սովորողների ձախողումները դպրոցում պայմանավորում են նրանց խնդիրներով։ Ուսումնառության համընդհանուր ձևավորում կիրառելիս հաճախ հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները։ Այս կերպ ուսուցիչները կարող են հասնել սովորողների մի մասի անհատական ուսուցման պլաններում (ԱՈՒՊ-ներ, որոնք կազմվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար, սահմանված նպատակներին, ինչպես նաև բավարարել առանց ԱՈՒՊ-ի ուսումնառող սովորողների անհատական ուսումնական կարիքները։ Բոլոր դեպքերում նյութը ներկայացնելու, յուրացրածը արտահայտելու և ներգրավումն ապահովելու համար կիրառվող մոտեցումների բազմազանությունը ուսուցիչներին հնարավորություն կտա դասերը կազմակերպելու այնպես, որ դրանք համապատասխանեն բոլոր աշակերտների կարիքներին՝ անկախ կրթական կարիքի ճանաչված լինելու փաստից։

Գլուխ 2. Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները և ուղենիշները.

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը: Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, հասկացություններին արձագանքելու սովորողի կարողությանը կամ հմտություններին: Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա և կարողանա արձագանքել հասկացությանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային: ՈՒՀՁ-ն ունի երեք հիմնական սկզբունք, որը ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան: ՈՒՀՁ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական ուսումնառության բազմազան հնարավորություններ ստեղծելով: Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են:



Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈՒՀՁ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում: Օրինակ, վերևում նկարագրված՝ գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել ինչպես հուզական, այնպես էլ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Ստորև կներկայացնենք ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասապրոցեսում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ:

2.1 Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն

Կարևոր է ապահովել տարբերակներ տեղեկության ընկալման և ըմբռնման համար, որպեսզի դասարանում ուսուցման բովանդակությունը լինի մատչելի և հասանելի բոլորի համար:

ՈՒՀՁ ուղենիշներ

● Ստեղծել նյութի ցուցադրումը հարմարեցնելու հնարավորություններ, ընդ որում՝ ապահովել այլընտրանքներ լսողական և տեսողական տեղեկատվության համար: Օրինակ՝ բացի տպագրված նյութը ներկայացնելուց, կարելի է այն ձայնագրել, գրաֆիկական պաստառներ ստեղծել տարատեսակ համակարգչային ծրագրերի 45 միջոցով, որպեսզի դրանք հասանելի լինեն նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին ու

միևնույն ժամանակ արձագանքեն սովորելու բազմազան ոճերին ու բազմաբնույթ մտածողությանը: Այսպիսով՝ ստեղծել ուսուցման այնպիսի միջավայր, երբ գիտելիքի ներկայացման գործընթացում ակտիվանում են սովորողների հնարավորինս բոլոր զգայարանները, ինչն էլ նպաստում է նրանց՝ ուսումնական նյութի առավել խոր ընկալմանն ու յուրացմանը:

● Պարզեցնել բառապաշարն ու խորհրդանիշները, լեզվական կառույցներն ու ապահովել միջլեզվական հասանելիություն: Օրինակ՝ ընդգրկել օժանդակ միջոցներ՝ նկարներ, բացատրություններ, թարգմանություններ, պատկերային այլընտրանքներ, ընդգծել իմաստային կապերը, որպեսզի տեղեկությունը ցուցադրվի բազմազան միջոցներով:

● Ակտիվացնել գիտելիքը նախքան նոր նյութը ներկայացնելը. օրինակ՝ նոր թեմայի վերաբերյալ փոքրիկ թեստ հանձնարարել: Կարելի է նաև ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ նոր նյութը ուսումնասիրելուց առաջ, նախապես սովորեցնել անհրաժեշտ հասկացություններն ու կապեր ստեղծել առարկաների և կամ համանման հասկացությունների միջև:

● Ընդգծել կաղապարները, հանգուցային հասկացությունները, դրանց միջև առկա կապերը՝ նպաստելու համար դրանց մտապահմանն ու ըմբռնմանը:

● Ուղղորդել տեղեկությունը գործածելու, մտապատկերելու և հմտորեն կիրառելու գործունեությունը: Աշակերտին պետք է ներկայացնել ամբողջական առաջադրանքի տեսողական քարտեզը կամ լիարժեք քայլերը, կարևոր է նաև մեծ առաջադրանքը բաժանել փոքր ու իրար հերթափոխող, տրամաբանորեն միմյանց վրա կառուցվող քայլերի:

● Առավելագույնի հասցնել գիտելիքի ընդհանրացումն ու ոլորտից ոլորտ փոխանցումը: Կարևոր է աշակերտների համար հնարավորություններ ստեղծել՝ յուրացված գիտելիքն ու հմտությունները կիրառելու բազմապիսի իրավիճակներում:

2.2 Ուսումնական գործունեության և գիտելիքն արտահայտելու ձևերի բազմազանություն

Կարևոր է մտածել ընտրված առաջադրանքների, գիտելիքի արտահայտման եղանակների և գործունեության ձևերի ու միջոցների հարմարեցման և այն մասին, թե սովորողներին ինչպիսի աջակցություն ենք տրամադրում, որպեսզի հասնեն ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին:

ՈՒՀՁ ուղենիշներ

● Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և կողմնորոշվելու մեթոդները. օրինակ՝ ապահովել այլընտրանքներ սահմանված ժամանակի և շարժողական գործունեություն պահանջող առաջադրանքների կատարման համար: Ինչպես նաև տարբերակել պատասխանելու մեթոդները. օրինակ՝ 46 աշակերտները կարող են օգտագործել որոշակի նշաններ, որոնց միջոցով ներգրավումը կդառնա ավելի տեսանելի, իսկ ընթացիկ գնահատումը՝ ավելի արագ:

● Օժանդակել տեխնոլոգիական միջոցների և գործիքների հասանելիությանը: Սարքավորումների ընտրությունները պետք է բխեն սովորողների կարիքներից, այլապես դրանց ինքնանպատակ կիրառությունը կարող է խոչընդոտներ առաջացնել ուսումնառության համար:

● Կիրառել հաղորդակցման բազմաթիվ միջոցներ: Չպետք է ստիպել, որ բոլոր աշակերտներն իրենց գիտելիքներն ու ունակությունները նույն կերպ արտահայտեն, որպեսզի չսահմանափակենք նրանց կարողությունները:

● Օգտագործել ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման և ստեղծման բազմապիսի միջոցներ ու սովորողներին ապահովել այնպիսի նյութերով կամ գործիքներով, որոնք կամրջում են առաջադրանքի իրականացումն ու աշակերտների ունակությունները:

● Նպաստել գիտելիքի կիրառման սահունությանը և հմտությանը աստիճանական օժանդակության միջոցով: Բացի նոր գիտելիքի ներկայացումից՝ շատ կարևոր է, որ ուսուցիչները բավարար ժամանակ տրամադրեն սովորողների յուրացրած նյութի իմաստալից կրկնությանն ու այն հմտության հասցնելուն:

● Ուղղորդել և աջակցել սովորողների՝ նպատակներ սահմանելու, պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացներին: Ուսուցիչներն աստիճանական աջակցություն պետք է ցուցաբերեն աշակերտներին, որպեսզի նրանք աստիճանաբար դրսևորեն ինքնուրույնություն՝ սահմանելով նպատակներ ու ծրագրելով մոտեցումներ, որոնցով կկարողանան հասնել իրենց նպատակներին:

● Դյուրինացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը: Կարևոր է օգնել աշակերտներին՝ դասակարգելու և կազմակերպելու տեղեկույթը:

● Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը՝ սովորողներին տրամադրելով հետադարձ կապ ճիշտ ժամանակին և որոշակի

ուղղորդումներով, ինչը հնարավորություն կտա նրանց ինքնուրույն շտկումներ կատարելու ու դիտարկելու սեփական առաջընթացը:

2.3 Ներգրավման ձևերի բազմազանություն

Նկատի ունենալով, որ սովորողները տարբերվում են ընդգրկման և ներքին հետաքրքրությունների դրսևորման տեսանկյունից՝ շատ կարևոր է նրանց տրամադրել տարբերակներ և ընտրության հնարավորություն՝ խթանելով նրանց սովորելու մոտիվացիան ու ջանքերի շարունակականությունը: Կարևոր է նաև զարգացնել սովորողների ինքնատիրապետման ու ինքնակարգավորման հմտությունները, որոնք նրանց կօգնեն վերահսկելու սեփական զգացմունքները:

ՈՒՀՁ ուղենիշներ

● Ապահովել բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար: Սա ենթադրում է աշակերտներին տալ ընտրության միջոցներ, որոնցով կարելի է հասնել միևնույն նպատակին՝ նրանց մեջ զարգացնելով ինքնուղղորդումն ու ինքնուրույնությունը:

● Ուսումնառությունը կապել սովորողների կենսափորձի և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը: Կարևոր է աշակերտներին տրամադրել առաջադրանքներ, որոնք ենթադրում են ակտիվ մասնակցություն, հետազոտություն ու միևնույն ժամանակ խթանում են ստեղծագործական ունակություններն ու խնդիրներին նոր լուծումներ փնտրելու մղումը:

● Նվազեցնել սպառնալիքները, անհանգստացնող երևույթներն ու ցրվածությունը: Կարևոր է դասարանում ստեղծել աջակցող ու ընդունող միջավայր, քանի որ սթրեսի առկայությունը խոչընդոտում է ուսումնառությունը:

● Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը: Անհրաժեշտ է, որ աշակերտը հստակ գիտակցի, թե ինչու է այդ վերջնարդյունքին հասնելը կարևոր, ու դա որքանով կօգնի նրան դառնալու առավել մրցունակ:

● Տարբերակել պահանջներն ու ռեսուրսները ուսումնառության օպտիմալ բարդության համար: Բոլոր աշակերտները պետք է հնարավորություն ունենան կատարելու անհրաժեշտ բարդության առաջադրանքներ, որոնք և՛ մարտահրավեր են նետում սովորողներին, և՛ տրամադրում են անհրաժեշտ ռեսուրսները՝ դրանք հաղթահարելու համար:

● Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը։ Անհրաժեշտ է ստեղծել համագործակցության միջավայր, ձևավորել խմբեր՝ հստակ դերերով ու գործողությունների ծրագրով։

● Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ։ Կարևոր է աշակերտներին սովորեցնել քննադատաբար նայել իրենց և ուրիշների աշխատանքներին ու նրանց տրամադրել շարունակական կառուցողական հետադարձ կապ։

● Խթանել մոտիվացիան ու զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները։ Ինքնատիրապետման ու ինքնակարգավորման հմտությունները զարգացնելու միջոցով սովորեցնում ենք աշակերտներին վերահսկել սեփական զգացմունքները, գտնել լուծումներ տարբեր իրավիճակներում և լինել հանդուրժող ու կառուցողական։

● Զարգացնել ինքնագնահատման և ինքնավերլուծության ունակությունները։ Կարևոր է վարքի ինքնագնահատման և սեփական առաջընթացի մեխանիզմներ կիրառելը. օրինակ՝ ինքնագնահատման թերթիկները, որոնք աշակերտներին օգնում են վերլուծելու և մշտադիտարկելու սեփական վարքային դրսևորումները, ինչպես նաև ձևավորելու իրենց ապագա գործողությունները։

Գլուխ 3. Փորձարարական դաս՝ պլանավորված ՈՒՀՁ սկզբունքներով

Դասի թեմա՝ Քլորի ֆիզիկական, քիմիական հատկությունները, ստացումը: <<Քլորի դատավարությունը>>:

Առարկա՝ Քիմիա

Դասարան՝ 9Բ

Դասի տիպ՝ դերային ուսուցողական խաղ-դատավարություն:

Դասի նպատակը Դասի ավարտին մասնակիցները կկարողանան ...	**Կարևոր դրույթները** Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք մասնակիցը պետք է սովորի…	**Անհրաժեշտ նյութերը, պարագաներ** Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:
●հասկանալ և թվարկել քլորի քիմիական, ֆիզիկական,կենսաբանական հատկությունները,ստացման եղանակները, կիրառության ոլորտները: ●պարզաբանել բնապահպա-նական հիմնահարցեր: ●ձևավորել թիմում աշխատելու և բանավիճելու կարողություն:	● քլորի քիմիական հատկություններ, ֆիզիկական հատկություններ, քլորաջրածին, աղաթթու, ժավելաջուր,քլորակիր, Ֆոսգեն:	●Պաստառներ, համակարգիչ, պարբերական աղյուսակ Քիմիական նյութեր՝ քլոր, աղաթթու,
Դասարանի, դասի նախապատրաստում Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին երբ մասնակիցները մինչեւ աշակերտների դասարան մտնելը		
● գիրք, տետր, գրիչ, պարբերական աղյուսակ, թեմատիկ պաստառներ, քիմիական նյութեր:		
Գնատահում Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)		
●Հարց ու պատասխան, քիմիական փորձ, ամփոփիչ թեստ::		

Դասի սկիզբ - *5* րոպե	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր:
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում 2. Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման եւ նպատակը) 3. Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ 4. Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: 5. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր: 6. Ի՞նչ են պատրաստվում անել դասին: 7. Խթանիչ վարժություն (եթե կա) **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ** - (1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկա-տվության համար, - (3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ, -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեու-թյունը, - (7.1) Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար, -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով	Նախապատրաստական փուլում կազմել ենք աշխատանքային խմբեր : Աշակերտներն, ուսուցչի օգնությամբ խմբերի բաժանված, քննարկում են դասի կառուցվածքը և պլանը: Կատարվում է ուսուցչի ողջույնի խոսք, բացակաների նշում, դասի նպատակի սահմանում: Գործող անձանց կրծքին փակցվում են <<անձը հաստատող >> քարտեր՝ նյութերի բանաձևերով և անվանմամբ: Դասի ընթացքում օգտագործվել են պաստառներ, <<անձը հաստատող>> քարտեր՝ նյութերի բանաձևերով և անվանմամբ: Դասը հագեցած էր տարբեր առարկանների հետ միջառարկայական կապերով: Ընդգծելու համար սովորելու արժեքն ու կարևորությունը դասի ընթացքում անընդհատ ուսումնական նյութը կապել ենք իրական կյանքին:

սովորելու արժեքն ու կարևորությունը, (8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը, - (9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները:	
Նոր Նյութի մատուցում - 10 րոպե	

Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ են սովորում աշակերտները: 2. Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: 3. Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին եւ տանում դեպի դասի նպատակը: **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվու-թյան համար, (2.1)/(2.2)Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները, շարահյուսությունն ու լեզվական կառույցները, -(2.3)Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը, -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով, -(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհրաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ, -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները,դրանց միջև գոյություն ունեցող կապերը, -(3.3)Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը, -(5.1) Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ,	Նոր նյութի թեման՝ Քլորաջրածին և աղաթթու: Սկզբում դասարանին ընդհանուր հարցի միջոցով պարզել, թե սովորողները գիտեն աղաթթվի և քլորաջրածնի ընդհանրություններն ու տարբերություններն: Նոր նյութի մատուցումը իրականացվեց պաստառների միջոցով: Ներկայացվեց քլորաջրածնի և աղաթթվի քիմիական, ֆիզիկական հատկությունները: Բացատրվեց քիմիական և էլեկտրոնային բանաձևերն պարզեցված ձևով: Ներկայացվեցին դասի կարևոր հասկացությունները: Քլորի քիմիական հատկությունների պարզաբանման համար իրականացվեց քիմիական փորձ:

-(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին, -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը, -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը:	

Ուղղորդված աշխատանք- 20 րոպե	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1.Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու: 2.Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում : 3.Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու: 4.Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու: 5.Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են: **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար, -(2.1)/(2.2) Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները, շարահյուսությունն ու լեզվական կառույցները, -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող	Այս փուլում որպես աշխատանք իրականացվեց դաս-դատավարությունը: <<Ոտքի՛, դատարանն է գալիս>>բառերով սկսվում է դատավարությունը: Նիստի քարտուղարը հայտարարում է նիստին ներկայացած անձանց: Դատախազը շարադրում է առաջադրված մեղադրանքը : Դատարանը անցնում է ապացույցների հետազոտմանը:Սկզբում որպես ապացույց ներկայացվեցին վկաների ցուցմունքները, (քիմիայի բնագավառի փորձագետները, կենսաբանը,հողագործը, խոհարարը ներկայացրեցին քլորի դրական կողմերը) այնուհետև մեղադրող կողմի ցուցմունքները (լողավազանի աշխատակիցը, բնապահպանը, քիմիական պաշտպանության աշխատակիցը, բժիշկ-թերապևտը ներկայացրեցին քլորի բացասական կողմերը): Վերջում հրապարակվում է դատարանի դատավճիռը :Դասի ընթացքում միջառարկայական կապեր հաստատվեցին կենսաբանության, աշխարհագրության, էկոլոգիայի և այլ առարկաների հետ: Աշակերտներն խրախուսվեցին արդյունավետ համագործակցման համար:

կապերը -(4.1) Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները, -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին, -(6.3) Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը, -(7.2) Ուսումնառությունը կապելԱն սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը, -(8.3) Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը, -(8.4) Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ:	
Ինքնուրույն աշխատանք - *5* րոպե	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1.Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: 2.Ի՞նչ վարժություն,առաջադրանք է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար: **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվ- ության համար, -(2.1)/(2.2Պարզեցնել	Ամփոփիչ թեստ (կազմված սովորողների կարողությունները և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով/:

բառապաշարն ու սիմվոլները, շարահյուսությունն ու լեզվական կառույցները, -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով, -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը, -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը, -(9.1) Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով, -(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները:	
Դասի ամփոփում- *5* րոպե	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին, 2. Ինչպե՞ս է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին, 3. Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում,	Այս փուլում կատարվում է դասի ամփոփում: Ընդհանուր քննարկմամբ ամփոփում ենք <<Քլորի դատավարությունը>>: Քննարկում ենք քլորի դրական և բացասական կողմերն և անդրադառնում դատավորի դատավճռին և պարզաբանում այն: Պարզաբանում դասի կարևոր հասկացություններն: Դասի վերջում կատարվում է աշակերտների գնահատում:

ՈՒՀՁ (UDL) Ուղենիշներ -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը, -(5.2) Օգտագործել ուսունառության վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ, -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը, -(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը, -(9.3) Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները:	

Եզրակացություն

Այսպիսով, համընդհանուր ձևավորումը ուսուցումը պլանավորելն է: Ուսումնասիրելով թեման եկանք այն եզրակացության, որ համընդհանուր ձևավորմամբ կազմակեպված դասաժամերին հաճախ աշխույժություն է տիրում, քանի որ աշակերտները սովորում են ամենատարբեր եղանակներով: Անհրաժեշտ է խրախուսել ուսուցիչներին մտածելու ուսուցման այնպիսի պլանավորման մասին, որը աշակերտներին հնարավորություն կտա բազմազան ձևերով սովորելու ուսումնական նյութեր, նոր հասկացություններ: Համընդհանուր ձևավորմամբ նախատեսվում է դասի պլանի կազմում յուրաքանչյուր սովորողի համար, ինչը պահանջում է հոգատարություն և հասանելիության ապահովում բոլորի համար: Սովորողները կարող են տեղեկատվություն ստանալ զանազան ձևերով: Դրանք կարող են լինել տեսողական, լսողական, շոշափելու կամ մուլտիմեդիայի միջոցով: Աշակերտներին տեղեկատվությունը բազմազան միջոցներով փոխանցելը ապահովում է նյութի մատչելիությունը: Սովորողները կարող են իրենց յուրացրածը արտահայտել զանազան ձևերով: Դա կարող է լինել գրելու, խոսելու, թատերական ներկայացման, արվեստի կամ ցուցադրման այլ եղանակներով: Իրենց գիտելիքները ցույց տալու համար սովորողին տրամադրվող բազմազան ձևերը մեծացնում են սովորածը արտահայտելու հնարավորությունը: Աշակերտների մեջ հարկավոր է հետաքրքրություն առաջացնել սովորելու նկատմամբ:

Գրականության ցանկ

1. «Ներառական կրթության ռազմավարություններ» Դասագիրք

2. Դավթյան Մ, Խարատրյան Մ., Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան 2019

3. Ադամյան Հ.Ա., Մարգարյան Լ.Հ., Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումն աջակցության կենտրոններում, Ձեռնարկ, Երևան, 2019

4.Հայկական պետական մանկավարժական համալսարանի համայնքային ներառականության հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոն,երևան, 2019, 100էջ

5.Տեսանյութ. «Ի՞նչ է ուսումնառության համընդհանուր ձևավորումը»։ https://www.youtube.com/watch?v=OxMmIGFhG9M

6.Տեսանյութ.https://www.google.com/search?rlz=1C1GGRV_enAM1005AM1007&q=%D5%88%D6%82%D5%B0%D5%B1+%D5%BD%D5%AF%D5%A6%D5%A2%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80&sa=X&ved=2ahUKEwj7uLC0won_AhUCQvEDHZaZBZYQ1QJ6BAgdEAE&biw=1360&bih=657&dpr=1#fpstate=ive&vld=cid:299ab599,vid:mSHKAShxfPc

7.Տեսանյութ.https://www.google.com/search?rlz=1C1GGRV_enAM1005AM1007&tbm=vid&q=%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6+%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80+%D5%B1%D5%A5%D6%82%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%B4&sa=X&ved=2ahUKEwjr3aD6yYn_AhUAR_EDHR_VCoEQ1QJ6BAgDEAE&biw=1360&bih=657&dpr=1#fpstate=ive&vld=cid:42a0dd31,vid:mSHKAShxfPc